## ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

---

Կեանքը չէ տալիս ինձ հաւատ և յոյս,
Կեանքը չէ տալիս եռանդ իմ հոգուն,
Եւ ես նորանից էլ սիրտ, խըրախոյս,
Տեսնում եմ, այո՛, զուր եմ ըսպասում։
Եւ կանգնած է նա իմ առջև, ինչպէս
Ցուսաբեկ ծերուկ, զըզուած բոլորից,
Որ դարձնում է իւր խորշոմած երես
Ձեռքերը պարզած խըղճուկ զաւակից.
Որդու մըրմունջներ, աղաչանք և սուգ,
Փայփայանքների կարօտ խորագին—
Բայց ծերի դէմքին չը կայ արտասուք.
Նա անողոք է որդու առաջին։

Հոգի՛ իմ, կեանքից մի խնդրիլ իզուր
Ցոյս, հաւատ, եռանդ, քաջալերութիւն.
Ո՞րտեղից նա տայ, երբ անյոյս, տրխուր
Հազիւ թըմրում է նորա դոյութիւն,
Երբ նա ինքըն էլ՝ թըշուառ ու դալուկ,
Փայփայման կարօտ՝ չէ գըտնում գըգւանք.
Երբ լալ է ուզում—չը կայ արտասուք,
Երբ հառաչում է—չը կայ արձագանք։
Մի՛ ցաւիլ, հոգի՛, և քո մէջ խեղճը
Ամենայն կարօտ—սէր և յոյս և խանդ,
Եւ ներքուստ վառուած՝ գէթ գու ներշնչիր
Այս մեր խեղճ կեանքին ջերմաջերմ եռանդ։

Թիֆլիս. 1891 թ., 22 մարտ։